

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՆԶԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ «ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ» ԲԱԺՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

1. Երևանի պետական համալսարանի (այսուհետ ԵՊՀ) նախապատրաստական դասընթացների գործունեության հիմնական նպատակը ՀՀ հանրակրթական հաստատությունների (դպրոցներ, քոլեջներ, վարժարաններ, նախնական մասնագիտական հաստատություններ) ավարտական դասարանների աշակերտների և սովորողների՝ բուհ ընդունվելուն նախապատրաստումն է, ինչպես նաև ուսումնալսողի շարունակելու համար ամուր հիմքերի ստեղծումը:

ԵՊՀ նախապատրաստական դասընթացները կազմակերպում և համակարգում է մինչհամալսարանական կրթության կենտրոնի (այսուհետ Կենտրոն) նախապատրաստական դասընթացների բաժինը (այսուհետ Բաժին):

2. Աշակերտները և սովորողները նախապատրաստական դասընթացների ունկնդիր ձևակերպվելու համար ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.

- անձնագիր (ծննդյան վկայական)
- 2 լուսանկար
- ուսման սահմանված վճարի անդորագիր

3. Նախապատրաստական դասընթացների ունկնդիրների համար կազմակերպվում են երկարաժամկետ (ութամսյա) և արագացված (երկամսյա) դասընթացներ:

4. Ութամսյա նախապատրաստական դասընթացները կազմակերպվում են յուրաքանչյուր ուստարվա հոկտեմբեր-մայիս, իսկ արագացված դասընթացները՝ ապրիլ-մայիս ամիսների ընթացքում:

Նախապատրաստական դասընթացների ուսման վարձը սահմանվում է ԵՊՀ գիտական խորհրդի կողմից՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա համար:

5. Երկարաժամկետ նախապատրաստական դասընթացների ունկնդիրների գիտելիքների նախնական մակարդակին համապատասխան խմբեր ձևավորելու նպատակով Բաժինը բոլոր հանրակրթական առարկաներից նախապես անցկացնում է թեստավորում:

6. Նախապատրաստական դասընթացներում ուսուցումն իրականացվում է դասախոսությունների, գործնական աշխատանքների և խորհրդատվությունների ձևով:

7. Ուսումնական գործընթացում ունկնդիրների գիտելիքները վերահսկելու համար կիրառվում են հետևյալ ձևերը՝ ընթացիկ ստուգումներ ուսման ընթացքում և ավարտական քննություններ:

8. Ունկնդիրների գիտելիքների մակարդակը որոշվում է 20 միավորանոց համակարգով: Ուսումնական դասընթացը հաջողությամբ ավարտած ունկնդիրներին տրվում է սահմանված նմուշի վկայական՝ ավարտական քննությունների արդյունքներով:

9. Նախապատրաստական դասընթացներից ունկնդիրներին հեռացնելու և վերականգնելու կարգը սահմանվում է բաժնի ներքին կանոններով՝ հաստատված ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից:

10. ԵՊՀ-ի և ունկնդիրների (նրանց ուսման գործուղած կամ նրանց ներկայացնող անձանց) հարաբերությունները կարգավորվում են կրթական ծառայությունների մատուցման պայմանագրով:

11. Նախապատրաստական դասընթացների ունկնդիրներն իրավունք ունեն՝

- ստանալ որակյալ կրթություն՝ համաձայն ուսուցման ընտրված ծրագրի,
- օգտվել ԵՊՀ նյութատեխնիկական բազայի ընձեռած հնարավորություններից,
- ընթացքում փոխել նախապատրաստման ուղղվածությունը:

12. Նախապատրաստական դասընթացների ունկնդիրները պարտավոր են՝

- սահմանված ժամկետներում վճարել ուսման վարձը,
- սահմանված ժամկետներում կատարել բոլոր այն առաջադրանքները, որոնք նախատեսված են կրթական ծրագրերով,
- տիրապետել տեսական գիտելիքներին և գործնական հմտություններին՝ ընտրված հանրակրթական առարկաներից և դասընթացներից,
- պահպանել ԵՊՀ-ի կարգապահական կանոնները:

13. Նախապատրաստական դասընթացները վարում են ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները: Նախատեսված լսարանային ժամերը հաշվառվում են ամբիոնային բեռնվածություններում կամ իրականացվում ժամավճարային հիմունքներով:

14. Նախապատրաստական դասընթացների կրթական ծրագրերի բովանդակությունն ու որակը ապահովելու նպատակով, ըստ հանրակրթական առարկաների, ձևավորվում է փորձագիտական խորհուրդ, որը հրամանագրվում է ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից:

15. Կրթական գործընթացի մասնակիցները պարտավոր են պահպանել Բաժնի գործունեությունը կանոնակարգող նորմատիվ ակտերի, ինչպես նաև ԵՊՀ-ի հետ կնքված պայմանագրերի պահանջները: